

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Տ. ԱՐՏԷՆ ՔԱՀԱՆԱՅ ԱՔՐԱՀԱՄԵԱՆ

Աւագանի անունով Նարեկ, ծնած է 9 Յունուար, 1994-ին, Երեւան, Հայաստան: Զաւակն է Արամ եւ Դոհար Աբրահամեաններու:

2000-2009 թթ. սկզբնական կրթութիւնը ստացած է Երեւանի՝ Սերօ Խանգաղեանի անուան դպրոցը:

2008-ին ծառայած է Արմաւիրի թեմի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ մէջ:

2011 Մարտ 1-ին Դպիր կը ձեռնադրուի Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի ձեռամբ:

2017-ին կ'աւարտէ Ընծայարանի եռամեայ բաժինը եւ Սարկաւագ կը ձեռնադրուի ձեռամբ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարքի:

2018-ին եղած է Դիւանատան Վկայագրերու գրասենեակի վարիչ: Նոյն տարին նշանակուած է Սրբոց Թարգմանչաց Վարժարանի առժամեայ տեսուչ:

2019-ի Նոյեմբեր 17-ին, ձեռնադրուած է ամուսնացեալ քահանայ: